# Ազգային ուսումնական օլիմպիադա աշխարհագրությունից
# III փուլ
# 2025 թ.

- *Հարց ընտրովի պատասխաններով - առաջադրանք # 1-5*

**Հրահանգ**

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրած պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա, հետևյալ կերպ՝ պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծումներ և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք, հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) 1. **Որտե՞ղ են նկարահանվել տվյալ լուսանկարները:**




ա) Նոր Զելանդիայում,
բ) Միացյալ Թագավորությունում,
գ) Ավստրալիայում,
դ) Կայմանյան կղզիներում:

(1) 2. **Տրված ինֆոգրաֆիկան ցույց է տալիս ՆԱՏՕ-ի անդամ երկրներում պաշտպանությանը հատկացվող ծախսերը (մլրդ ԱՄՆ դոլար): Այս տեղեկատվության հիման վրա ո՞ր դատողությունն է ճիշտ:**

ա) Լեհաստանն ավելի մեծ գումար է հատկացնում պաշտպանությանը, քան Գերմանիան,

բ) 2023 թվականին պաշտպանության ծախսերը տոկոսայնորեն Լեհաստանում ավելի շատ աճեցին, քան ԱՄՆ-ում:

գ) ԱՄՆ-ում պաշտպանությանը հատկացվող ծախսերի բեռը էկոնոմիկայի վրա ավելի մեծ է, քան Լեհաստանում:

դ) Բալթյան երկրները չեն բավարարում պաշտպանությանը հատկացվող ծախսերի նվազագույն պահանջները:



**(1) 3. Ո՞ր վերնագիրն է համապատասխանում առաջադրանքում տրված քարտեզին:**




ա) Աշխարհի կենսաբազմազանության թեժ կետեր,
բ) աշխարհի անջատողական տրամադրություններ ունեցող տարածաշրջաններ,
գ) աշխարհի առաջատար տնտեսական տարածաշրջաններ,
դ) աշխարհի բնական-տարերային աղետների թեժ կետեր:

**(1) 4. Ի՞նչ կարելի է ստույգ որոշել նկարում տրված վայրի հետ կապված:**



ա) թե որ կիսագնդում է այն գտնվում,
բ) թե որ կլիմայական շրջանում է գտնվում,
գ) գերակշռող քամու ուղղությունը,
դ) էրոզիական գործընթացների դինամիկան:

**(1) 5. Ո՞րն է անհրաժեշտ նախապայմանը մթնոլորտում հալո առաջանալու համար:**



ա) Արեգակնային ակտիվության ժամանակաշրջանում մեծ քանակությամբ թափանցող ճառագայթները,
բ) մագնիսոլորտում արեգակնային քամու արագության բարձրացման հետևանքով առաջացող խախտումները,
գ) գլոբալ կլիմայի փոփոխության ընթացքում օդում $CO_2$-ի կոնցենտրացիայի ավելացումը,
դ) սառցե բյուրեղների համապատասխան դասավորվածությունը տրոպոսֆերայի վերին շերտերում:

➢ *Համապատասխանության որոշում - առաջադրանք # 6 - 8*

| Հրահանգ |
|---|
| Որոշեք համապատասխանությունը և նմուշի համաձայն լրացրեք պատասխանների թերթիկում տրված համապատասխան աղյուսակը: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի: |

**(7) 6. Համաձայն նմուշի լրացրե՛ք պատասխանների թերթիկում տրված համապատասխան աղյուսակը.**

| | Համաշխարհային մշակութային/բնական ժառանգության հուշարժանը պատկերող լուսանկար | Պետությունը, որտեղ այն գտնվում է |
|---|---|---|
| *Նմուշ* | *Ուշգուլիի համայնք*  | *Վրաստան* |
| 1 |  Բելովեժյան թավուտ | |

| | | |
|---|---|---|
| **2** | <br>Մամոնտի քարանձավ | |
| **3** | <br>Ջրվեժ Իգուասու | |

| | | |
|---|---|---|
| **4** | <br>Գյորեմե ազգային այգի և Կապադովկիա | |
| **5** | <br>Աթոս լեռ | |
| **6** | <br>Արգելոց Ցինգի-դե-Բեմարահա | |

| | | |
|---|---|---|
| 7 | <br>Նասկայի գեոգլիֆներ | |

(6) 7. Համաձայն նմուշի լրացրե՛ք պատասխանների թերթիկում տրված համապատասխան աղյուսակը.

| | Տիեզերական լուսանկար | Նեղուցի անվանումը | Պետություններ, որոնք իրարից բաժանում է այդ նեղուցը |
|---|---|---|---|
| *Նմուշ* |  | *Պա դե Կալե* | *Միացյալ Թագավորություն-Ֆրանսիա* |
| 1 |  | | |

| | | | |
|---|---|---|---|
| **2** |  | | |
| **3** |  | | |
| **4** |  | | |
| **5** |  | | |

| | | | |
|---|---|---|---|
| **6** |  | | |

(7) 8. Համաձայն նմուշի լրացրե՛ք պատասխանների թերթիկում տրված համապատասխան աղյուսակը.

| | Տեսարժան վայր | Քաղաք | Ծովը / ծոցը, որի ափերին այն գտնվում է |
|---|---|---|---|
| Նմուշ |  | Ռիո դե Ժանեյրո | Գուանաբարա ծոց |
| 1 |  | | |

| | | | |
|---|---|---|---|
| 2 |  | | |
| 3 |  | | |
| 4 |  | | |

| | | | |
|---|---|---|---|
| 5 |  | | |
| 6 |  | | |
| 7 |  | | |

- ***Տեղեկատվության վերլուծություն - առաջադրանք # 9-13***

| **Հրահանգ** |
|---|
| Վերլուծեք առաջադրանքում տրված տեղեկությունը և պատասխանեք հարցերին: Պատասխանը գրեք պատասխանների թերթիկում հատկացված համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի: |

(2) 9. Ինչպե՞ս է կոչվում լուսանկարում պատկերված ավանդական կացարանը: Անվանե՛ք այն բնիկ ժողովրդին, որը կառուցում է այս տեսակի կացարաններ Արկտիկայի տարածաշրջանում:



(4) 10. Վերլուծե՛ք տրված տեղեկությունները և պատասխանե՛ք հարցերին.









**Իկալուիտ (Կանադա) 64° հս.լ. 68° արմտ.երկ.**

Բարձրությունը ծով.մակ. 103 մ °C: -8,6 մմ. 592



Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում ջրի ջերմաստիճանի տարեկան ընթացքը 66° հս.լ. 66° արմտ.երկ.




(2) **10.1.** Ո՞ր ամսին է արկտիկական սառույցի մակերեսը ամենափոքրը և բացատրե՛ք այս հանգամանքի պատճառը:

(2) **10.2.** Գոյություն ունի կարծիք, ըստ որի՝ արկտիկական սառույցից ազատվելը կբերի ինչպես բացասական, այնպես էլ դրական արդյունքների: Այս կարծիքը հաստատելու համար բերե՛ք մեկ դրական և մեկ բացասական փաստարկ:

**(6) 11. Վերլուծե՛ք տեղագրական քարտեզի հատվածը և պատասխանե՛ք հարցերին.**




Մասշտաբ:მასშტაბი: 1 : 5 000

**(1) 11.1.** Տրված ռելիեֆի կտրվածքներից (պրոֆիլներ) ո՞րն է համապատասխանում քարտեզի վրա A և B կետերի միջև գծված հատվածին:

ա) I
բ) II
գ) III
դ) IV




**(1) 11.2.** Ծովի մակարդակից մոտավորապես քանի՞ մետր բարձրության վրա է գտնվում Գոմի լեռը:

ա) 165 մ
բ) 172 մ
գ) 184 մ
դ) 191 մ

**(1) 11.3.** Հաշվե՛ք, թե քանի մետր է աղբյուրի և անտառապահի տան միջև եղած հեռավորությունը, եթե քարտեզի վրա համապատասխան հատվածի երկարությունը կազմում է 5,5 սանտիմետր (անպայման ցույց տվեք հաշվարկման գործընթացը):

**(3) 11.4.** Որոշե՛ք, թե քարտեզի վրա թվանշաններով նշված հողատարածքներից (1, 2 թե 3) ո՞րն է գտնվում ջրերով պայմանավորված հողի էրոզիայի զարգացման ամենաբարձր ռիսկի տակ: Ձեր ընտրությունը հաստատելու համար բերե՛ք երկու փաստարկ:

**(3) 12. Օգտագործելով Դոդոմա քաղաքի կլիմայական տվյալները պատասխանե՛ք հետևյալ հարցերին.**

Դոդոմա քաղաքի կլիմայական տվյալները (1991-2020)

| Ամիս | Հունվ. | Փետրվ. | Մարտ | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգոստ. | Սեպտ. | Հոկտ. | Նոյ. | Դեկտ. | տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջին առավելագույնը °C (°F) | 29.7 (85.5) | 29.8 (85.6) | 29.6 (85.3) | 28.8 (83.8) | 28.2 (82.8) | 27.4 (81.3) | 26.6 (79.9) | 27.5 (81.5) | 29.2 (84.6) | 30.8 (87.4) | 31.5 (88.7) | 30.6 (87.1) | 29.1 (84.4) |
| Միջինը °C (°F) | 24.1 (75.4) | 24.2 (75.6) | 23.7 (74.7) | 23.3 (73.9) | 22.7 (72.9) | 20.9 (69.6) | 20.3 (68.5) | 21.0 (69.8) | 22.3 (72.1) | 24.1 (75.4) | 24.9 (76.8) | 24.5 (76.1) | 23.0 (73.4) |
| Միջին նվազագույնը °C (°F) | 19.3 (66.7) | 19.2 (66.6) | 19.0 (66.2) | 18.4 (65.1) | 17.1 (62.8) | 15.1 (59.2) | 14.2 (57.6) | 14.9 (58.8) | 15.9 (60.6) | 17.5 (63.5) | 18.8 (65.8) | 19.3 (66.7) | 17.4 (63.3) |
| Տեղումների միջին քանակը մմ (դյույմ) | 140.4 (5.53) | 116.8 (4.60) | 111.1 (4.37) | 43.8 (1.72) | 4.8 (0.19) | 0.2 (0.01) | 0.2 (0.01) | 0.0 (0.0) | 0.1 (0.00) | 6.0 (0.24) | 27.8 (1.09) | 143.3 (5.64) | 594.5 (23.41) |
| Անձրևոտ օրերի միջին քանակությունը (≥1մմ) | 9.9 | 8.4 | 7.7 | 4.1 | 0.8 | 0.1 | 0.1 | 0.0 | 0.1 | 0.4 | 2.1 | 7.9 | 41.6 |
| Միջին հարաբերական խոնավությունը (%) | 66 | 68 | 70 | 68 | 63 | 60 | 59 | 58 | 55 | 53 | 55 | 63 | 62 |

(1) **12.1.** Որքա՞ն է Դոդոմա քաղաքի օդի միջին ջերմաստիճանի տարեկան լայնույթը (ամպլիտուդ): (անպայման ցույց տվեք հաշվարկման գործընթացը):

(2) **12.2.** Ո՞ր կլիմայական գոտում է գտնվում Դոդոման և ո՞ր քամիներն են ազդում քաղաքում տեղումների տարեկան ընթացքի վրա:

(5) **13. Վերլուծե՛ք տեղեկատվությունը և պատասխանե՛ք հարցերին.**

Հուսիտների խմբավորումը 2004 թվականին զինված ապստամբություն սկսեց երկրի կառավարության դեմ: Խմբավորումն աստիճանաբար վերահսկողություն հաստատեց երկրի հարավային տարածքներում, իսկ 2015 թվականին, երբ խմբավորմանը հաջողվեց գրավել մայրաքաղաքը և այնտեղ վերահսկողություն հաստատել, այն դարձավ երկրի դե ֆակտո իշխող կազմակերպություն, որի լեգիտիմությունը չի ճանաչում Միավորված ազգերի կազմակերպությունը: Չնայած դրան՝ Հուսիտները միևնույն է ունեն իրենց աջակիցները երկրի սահմաններից դուրս: Հայտնի է, որ կազմակերպությանը ռազմական և ֆինանսական աջակցություն են ցուցաբերում Պարսից ծոցի երկրներից մեկը և նրա կողմնակիցները, այդ թվում՝ Սիրիայում Հեզբոլլահը:

2024 թվականի ձմռանը հատկապես սրվեցին Հուսիտների և արևմտյան երկրների միջև հարաբերությունները Կարմիր ծովում և Բաբ էլ-Մանդեբի նեղուցում:







(1) **13.1.** Ո՞ր պետության դե ֆակտո իշխանության գլուխ են կանգնած Հուսիտները:
(1) **13.2.** Պարսից ծոցի ո՞ր պետությունն է աջակցում Հուսիտներին:
(1) **13.3.** Ո՞ր գործողություններն են հանգեցրել 2024 թվականին Հուսիտների և արևմտյան երկրների միջև հարաբերությունների սրման:
(1) **13.4.** Ի՞նչ տնտեսական ազդեցություն ունեցավ Եգիպտոսի վրա իրավիճակի սրումը 2024 թվականին:
(1) **13.5.** Ի՞նչ տնտեսական ազդեցություն ունեցավ եվրոպական երկրների վրա իրավիճակի սրումը 2024 թվականին: